<p><b>Ունակ կլինի</b></p> <p><b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ծանոթանալ անհրաժեշտ տեսքով համալրված գծապատկերի տեխնիկական հնարավորություններին:</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Զարգացնել տարածական մտածելակերպ:</li> </ul>
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b></p> <p>Գծավոր և պտտման մարմինների միջոցով մոդելավորվող գեղարվեստական իրերի և առարկաների համալիր գծագրերի, փովաձքների կազմավորում և աքսոնոմետրիայի կառուցում: Էսքիզավորման և կոնստրուկտավորման առանձնահատկությունները: Կազմածո մարմինների կառուցում ճիշտ չափային հարաբերություններով: Չափադրում: Փայտե և կերամիկական իրերի նախագծերի կազմում: Դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշների գծագրերի ձևակազմավորում:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b></p> <p>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր արժեքով:</p>
<p><b>Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ա. Ֆ. Կիրիլով, «Գծագրություն և նկարչություն»,</li> <li>2. Գ. Բ. Կուբանին, «Նկարը և կոմպոզիցիայի հիմունքները», Մոսկվա 1983</li> </ol>

<b>0402 / B01</b>	<b>Կոմպոզիցիա-1 /փայտ և կերամիկա/</b>	<b>4 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>0 / 64 / 0</b>	
<b>1- ին կիսամյակ</b>	<b>Հանրագումարային</b>	
Դասընթացի նպատակն է Ուսանողին սովորեցնել նախագծել խոհանոցային պարագաներ, սափոր՝ օգտագործելով բուսական, կենդանական և երկրաչափական զարդանախշեր:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>		

<p><b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կտիրապետի էսքիզներ կազմելու, նախագծելու տեխնիկական հնարքներին:</li> </ul>
<p><b>Ունակ կլինի</b> /Բուն մասնագիտական կարողություններ/  <ul style="list-style-type: none"> <li>Կկարողանա իր ստեղծագործած կոմպոզիցիոն էսքիզները իրականացնել նյութի /փայտի, խեցու/ վրա:</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կկարողանա փայտից պատրաստել խոհանոցային պարագաներ, կավից՝ կենցաղային իրեր՝ շերտերով բարձրանալու եղանակով:</li> </ul> </p>
<p><b>Համառոտ բովանդակությունը</b>  Բուսական զարդանախշերով, եզրագոտիներով և վարդյակներով խոհանոցային տախտակների փորագրում: Մափոք շերտերով բարձրանալու եղանակով:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b>  Նախատեսված է հանրագումարյին քննություն, գնահատվում է առավելագույնը 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում-քննություն:</p>
<p><b>Հիմնական գրականության ցանկը</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Վ. Հ. Բոդյան „Հայկական աղամաններ,,</li> <li>Գենադի Ֆեդոտով „Կավը և կերամիկան,, ՄՄՊԵ 2005</li> <li>Голубева О. Л. Основы композиции/ с иллюстрациями/. Изобразительное искусство.</li> <li>Сварог и К. 2008/2001 /</li> </ol>

<b>0402 / B01</b>	<b>Կոմպոզիցիա -1 / տեքստիլ /</b>	<b>4 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>0 / 64 / 0</b>	
<b>1- ին կիսամյակ</b>	<b>Հանրագումարային</b>	
<p>Դասընթացի նպատակն է Պատրաստել կիրառական արվեստի նկարիչ-մասնագետներ, որոնք կարող են արագ և նպատակասլաց կատարել գեղարվեստական բարձր մակարդակի գորգի, կարպետի, գոբելենի էսքիզներ:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կկարողանա ստեղծել տարբեր տեսակի ռապպորտներ և դրանք</li> </ul>		

<p>օգտագործել հիմնական էսքիզներում:</p>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կտիրապետի կոմպոզիցիոն ձևաստեղծման հնարքներին:</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կհասկանա գույնի երևույթը:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը</b></p> <p>Ծանոթություն առարկայի, նրա նպատակների ու խնդիրների, ինչպես նաև տեխնիկական միջոցների հետ: Ռիթմիկա, շարժում, հավասարակշռություն, չհավասարակշռված հավասարակշռություն: Ստեղծել պարզ երկրաչափական պատկերների դասավորություններ (եռանկյուն, քառակուսի, շրջան) գծերի միջոցով: Գույն: Գունային հարաբերություններ: Կոլորիտ: Կոնտրաստ: Ստեղծել դասավորություններ գունային ծավալների, գունային կոնտրաստների և տոնային անցումների միջոցով: Ռապպորտ: Ռապպորտի տեսակները: Ստեղծել կրկնվող էլեմենտով կարպետների էսքիզներ: Ստեղծել երկրաչափական, բուսական և կենդանական էլեմենտներով ֆրիզներ՝ օգտագործելով մանրանկարչությունից, գորգարվեստից մեզ հասած եզրագոտիների զարդամոտիվները:</p>		
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b></p> <p>Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում-քննություն:</p>		
<p><b>Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Գիվի Կանդարեյի «Գորելեն»,</li> <li>2. Վ. Ի. Սավիցկայա «Ժամանակակից սովետական գորելեն»,</li> <li>3. Հասմիկ Եղիազարյան «Երմնագորգ»,</li> <li>4. Վ. Գ. Ազատյան «Հայկական գորգ»,</li> </ol>		

<b>0401/ B01</b>	<b>Գծանկարչություն-1</b>	<b>5 կրեդիտ</b>
<b>6 ժամ</b>	<b>0/96/ 0</b>	
<b>1-ի ն կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատմամբ</b>	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել մատիտանկարի հնարավորություններին, նրա մոտ ձևավորել տարածական մտածելակերպ, ուսումնասիրել մարդու գլխի առանձին մանրամասներ:</p>		

<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կժանոթանա մատիտանկարի հնարավորություններին</li> </ul>
<p><b>Ունակ կլինի</b> /Բուն մասնագիտական կարողություններ/  <ul style="list-style-type: none"> <li>• Կուսումնասիրի մարդու գլխի առանձին մանրամասները: Համաչափությունները:</li> </ul> <b>/Ընդհանրական կարողություններ/</b> <ul style="list-style-type: none"> <li>• Կուսումնասիրի հարթ մակերեսի վրա ծավալներ ստանալու եռաչափ հնարքներին:</li> </ul> </p>
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>  Նատյուրմորտ գիպսե երկրաչափական մարմիններով կտորի ծալքերով: Նատյուրմորտ գիպսե զարդանախշով, մրգով: Գիպսե բերան: Գիպսե աչք: Գիպսե քիթ: Գիպսե ականջ:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b>  <i>Եզրափակիչ քննություն</i>  Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:</p>
<p><b>Հիմնական գրականության ցանկը</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Николай Лу. Рисунок; Основы учебного академического рисунка Эксмо 2008г.</li> <li>2. Николай Лу. Голожа челожека основы академического рисунка Эксмо 2010 г.</li> <li>3. Николай Белож основы техники рисунка Хорвест 2012г.</li> <li>4. Джорж Б.Бриджмен : Полное руководство по рисунку.</li> </ol>

<b>0401/ B08</b>	<b>Գունանկարչություն -1</b>	<b>5 կրեդիտ</b>
<b>6 ժամ</b>	<b>0 / 96/ 0</b>	
<b>1- ին կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատմամբ</b>	
<p>Դասընթացի նպատակն է Առարկայի նպատակն է ուսանողներին սովորեցնել օգտվելու գույնի, գծի, կոմպոզիցիայի, ռիթմի, լույսի ու ստվերի ընձեռած հնարավորություններից՝ հարթության վրա իրականությունը վերակենդանացնելու, ծավալի ու տարածության պատրանք ստեղծելու համար: Հմտացնել աշխատել ջրաներկով աշխատելուն գույների թափանցիկ հաջոր-</p>		

<p>դական շերտերի միջոցով տաք ու սառը գունային արտահայտիչ կոլորիտ ստանալու համար:</p>
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կիմանա գեղանկարչության հիմնական պայմանները:</li> </ul>
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա առարկաներին տալ ճիշտ գունային լուծումներ:</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա կատարել ճիշտ կառուցում և գունային վերլուծություն:</li> </ul>
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>  Նկարել նատյուրմորտ երկու կավե սափորներով (մեկը՝ ջնարակած), բանջարեղենով, մրգերով, կտորի ծալքերով (գրիգալ, Ա2, գուա2, ջրաներկ): Նկարել նատյուրմորտ՝ հակադարձ գույներ (տաք և սառը) ունեցող կտորների ծալքերով, սափորով, խնձորով, դեղձով (Ա2, գուա2, ջրաներկ): Նկարել նատյուրմորտ կարմիր կտորով, նռներով, ջնարակված սափորով (Ա2, գուա2, ջրաներկ): Նկարել նատյուրմորտ կարպետով, ծոռտե ափսեով, ցորենով, չորացրած բույսերով (շագանակագույն կոլորիտ), (Ա2, գուա2, ջրաներկ): Նկարել նատյուրմորտ՝ ապակե շշերով, սոխով, մետաղյա կաթսայով (գրիգալ, Ա2, գուա2, ջրաներկ): Նկարել նատյուրմորտ տաք և սառը գույների կտորներով, կավե, գիպսե առարկաներով, մրգերով (Ա2, գուա2, ջրաներկ):</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b>  <i>Եզրափակիչ քննություն</i>  Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայքայ 0,5 է:</p>
<p><b>Հիմնական գրականության ցանկը</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Николай Лу. Рисунок; Основы учебного академического рисунка Эксмо 2008г.</li> <li>2. Николай Лу. Голожа челожека основы академического рисунка Эксмо 2010 г.</li> <li>3. Николай Белож основы техники рисунка Хорвест 2012г.</li> <li>4. Джорж Б.Бриджмен: Полное руководство по рисунку.</li> </ol>

<b>0402 / B08</b>	<b>Աշխատանք նյութի վրա-1 / փայտ /</b>	<b>6 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>0 / 64 / 0</b>	
<b>1-ին կիսամյակ</b>	<b>Հանրագումարային</b>	
Դասընթացի նպատակն է Ուսանողին սովորեցնել փորագրության ձևերը և տեխնիկան, նրա մոտ ձևավորել երկրաչափական էլեմենտներ փորագրելու հմտություններ:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b> <b>Գիտելիք և իմացություն</b>		
<ul style="list-style-type: none"> <li>Կիմանա փորագրել բուսական զարդանախշերով՝ եզրագոտիներով և վարդնյակներով խոհանոցային տախտակներ:</li> </ul>		
<b>Ունակ կլինի</b> <b>/Բուն մասնագիտական կարողություններ /</b>		
<ul style="list-style-type: none"> <li>Կկարողանա փորագրել եզրագոտի և վարդնյակ:</li> </ul>		
<b>/Ընդհանրական կարողություններ/</b>		
<ul style="list-style-type: none"> <li>Կկարողանա փորագրել խոհանոցային տախտակներ:</li> </ul>		
<b>Համառոտ բովանդակությունը:</b> Բուսական զարդանախշերով եզրագոտիներով և վարդնյակներով խոհանոցային տախտակների փորագրում:		
<b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b> Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում-քննություն:		
<b>Հիմնական գրականության ցանկ</b>		
<ol style="list-style-type: none"> <li>1. Голубева О. Л. Основы композиции/ с иллюстрациями/. Изобразительное искусство.</li> <li>2. Сварог и К. 2008/2001 /</li> <li>3. Кринский В. Ф. Ламцов И В. Туркус М.А. Элементы архитектурно-пространственной композиции.Стройиздат. 1968</li> </ol>		

<b>0402 / B08</b>	<b>Աշխատանք նյութի վրա-1 /կերամիկա/</b>	<b>6 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>0 / 64 / 0</b>	
<b>1-ին կիսամյակ</b>	<b>Հանրագումարային</b>	
Դասընթացի նպատակն է		

<p>Ուսանողին սովորեցնել ծանոթանալ խեցեգործական առարկային, կավի մշակմանը և կենցաղային իրերի պատրաստմանը:</p>
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կկարողանա կավից պատրաստել կենցաղային իրեր՝ շերտերով բարձրանալու եղանակով:</li> </ul>
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ /</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կկարողանա բացատրել տեխնոլոգիաների տարբերությունը: Խնամք տանել գործիքների նկատմամբ:</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կտիրապետի ազատ ստեղծագործելուն:</li> </ul>
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>          Սափոր շերտերով բարձրանալու եղանակով:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b>          Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում-քննություն:</p>
<p><b>Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Վ. Հ. Բդոյան, «Հայկական աղամաններ»,</li> <li>Գենադի Ֆեդոտով, «Կավը և կերամիկան», ՄՄՊԵ 2005</li> </ol>

<b>0402 / B08</b>	<b>Աշխատանք նյութի վրա-1 /տեքստիլ /</b>	<b>6 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>0 / 64 / 0</b>	
<b>1- ին կիսամյակ</b>	<b>Հանրագումարային</b>	
<p>Դասընթացի նպատակն է Ուսանողին սովորեցնել հինել, գործել կարպետի տեխնիկայով տրքված զարդանախշը: Կատարել պարզ էլեմենտներ հին հայկական կարպետներից:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կիմանա հայկական կարպետի և հեյունային զարդանախշերի մասին: Կկատարի մեկական օրինակ:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p>		

<ul style="list-style-type: none"> <li>• Կլարոդանա սկզբից մինչև ավարտ ինքնուրույն կատարել երկու առաջադրանք՝ կարպետ և հեյուն:</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կտիրապետի կարպետի և հեյունային զարդանախշերի կատարման հնարքներին: Կճանոթանա գործվածքի գեղարվեստական ձևավորման /նկարագարման/ զաղտնիքներին:</li> </ul>
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b></p> <p>Գործել կարպետ՝ երկու կրկնվող զարդանախշով: Գործել հեյունային ծածկոցների դրվագ՝ մեկ կամ երկու զարդանախշով:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b></p> <p>Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում-քննություն:</p>
<p><b>Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Սերիկ Դավթյան, „Հայկական կարպետ,, „Հայկական ասեղնագործություն,,</li> <li>2. Է.Ա. Թանգյան, „Զարդանկար այբուբեն,,</li> <li>3. Հենրիկ Մնացականյան, „Հայկական տառատեսակներ,,</li> </ol>

<b>0103/ B15</b>	<b>Նյութերի տեխնոլոգիա-1</b>	<b>2 կրեդիտ</b>
<b>2 ժամ</b>	<b>24 / 8/ 0</b>	
<b>1-ին կիսամյակ</b>	<b>Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<p>Դասընթացի նպատակն է Ուսանողներին ծանոթացնել մետաղների ֆիզիկական, մեխանիկական և տեխնոլոգիական հատկություններին, նրանց համաձուլվածքների ստացման տեխնոլոգիային, մշակման եղանակներին և օգտագործման բնագավառներին, կոռոզիայի դեմ պայքարի տեխնոլոգիական մեթոդներին, սովորեցնել ուսանողներին իրենց աշխատանքների համար ընտրել համապատասխան նյութեր:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b></p> <p><b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կճանոթանա մետաղների ֆիզիկական, մեխանիկական, տեխնոլոգիական հատկություններին</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b></p> <p><b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p>		



- Կհասկանա կոռոզիայի երևույթը և կծանոթանա նրա դեմ պայքարի միջոցներին,

**/Ընդհանրական կարողություններ/**

- Կծանոթանա մետաղների համաձուլվածքներին, նրանց հատկություններին և կիրառման բնագավառին:

**Համառոտ բովանդակությունը:**

Նյութերի տեխնոլոգիա առարկան և նրա նշանակությունը: Մետաղների և նրանց համաձուլվածքների օգտագործումը դեկորատիվ արվեստում: Մետաղների ֆիզիկական հատկությունները (գույն, փայլ, խտություն, կարծրություն, էլեկտրական և մագնիսական հատկությունները): Մետաղների մեխանիկական հատկությունները (ամրություն, առաձգականություն, պլաստիկություն, դիմացկունություն): Մետաղների տեխնոլոգիական հատկությունները (հեղուկահոսություն, ձուլման կծկում, կռելիություն, եռակցություն, մշակելիություն): Մետաղների և մետաղյա գեղարվեստական իրերի կոռոզիան, կոռոզիայի էությունը և տեսակները, կոռոզիայի դեմ պայքարի տեխնոլոգիական մեթոդները: Մետաղների ջերմային մշակում (շիկացում, նորմալացում, մխում, միասեղմում): Մետաղների ջերմաքիմիական մշակում (ցեմենտացում, ազոտացում, ցիանացում, այլումինավորում, սիլիկավորում): Սև մետաղներ: Երկաթի ստացման տեխնոլոգիան: Երկաթի համաձուլվածքների (հալոյթների) ստացումը: Երկաթ-ածխածնային համաձուլվածք: Ածխածնային պողպատներ, նրանց տեսակները և կիրառությունը: Չուգունի ստացումը, նրա տեսակները (քրոմային, այլումինային, բարձրմանգանային, քրոմնիկելային, գորշ, տիտանային, պղնձային, բարձրսիլիցիումային): Լեգիրացված պողպատ, նրա տեսակները (կոնստրուկտորական և գործիքային պողպատներ): Ֆերրոհալոյթներ, նրանց տեսակները և կիրառությունը:

**Գնահատման մեթոդները և չափանիշները:**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

*1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:*

*2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:*

**Հիմնական գրականության ցանկը**

1. И. М. Коган „Химия красители,, Москва 1956
2. К. В. Некрасов „Курс общей ымии,, Москва 1959

<b>0402 / B26</b>	<b>Կոնստրուկտավորում և տեխնիկական գծագրություն-2</b>	<b>2 կրեդիտ</b>
<b>2 ժամ</b>	<b>8/24/ 0</b>	
<b>2- րդ կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատմամբ</b>	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել հարթության վրա ծավալներ պատկերելու արտահայտչամիջոցներին, կկարողանա նախագծել, չափագրել կահույք, զարդաքանդակ, մանրակերտ ցուցապատառ նախագծելու և չափագրելու</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա ձևակազմավորել էսքիզ, նախագծային պլանշետ, գծագիր, տեխնիկական նկար, չափադրել, կատարել գրառումներ ինչպես գծագրական, այնպես էլ՝ գեղանկարչական գրատեսակներով.</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ձեռք կբերի կարողություններ խեցեգործական իրերի, կահույքի և նրա խմբավորումների համար նոր ոճավորումներ ստեղծելու ուղղությամբ:</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ըմբռնել արքունուետրիկ մոդելը որպես ծավալի,ձևի և դիրքի վերարտադրում:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>  Նախագծային պլանշետի կազմում: Կահույքի և նրա խմբավորումների տեսքերի համալիր գծագրերի, անհրաժեշտ հատույթների և կտրվածքների, նրանց առանձին մանրամասների միացումների կառուցում: Հանգույցների մասնատում,միացումների պարզաբանում՝ մեծ մասշտաբով առանձին պատկերելու միջոցով:Կահույքի խմբավորումների նախագծում: Գեղարվեստական իրերի խմբային նախագրծում: Նրանց ցուցադրությունների ոճավորում: Կոնստրուկտավորման հնարավորությունների ներդրում կերպարվեստի ստեղծագործական աշխատանքներում:</p>		
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b>  Եզրափակիչ քննությունը գնահատվում է 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:</p>		
<b>Հիմնական գրականության ցանկը</b>		

1. Ա. Ֆ. Կիրիլով, Գծագրություն և նկարչություն,,
2. Գ. Ի. Կուբանին, Նկարը և կոմպոզիցիայի հիմունքները,, Մոսկվա 1983

<b>0401/ B02</b>	<b>Գծանկարչություն-2</b>	<b>5 կրեդիտ</b>
<b>6 ժամ</b>	<b>0/96/ 0</b>	
<b>2- րդ կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատամամբ</b>	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել մարդու գանգին և անատոմիական գլխին՝ մկանային համակարգի վերլուծական մոտեցմամբ: Ուսումնասիրել նրա կառուցվածքը և համաչափությունները: Ուսումնասիրել նաև մարդու մարմնի վերջույթների կառուցվածքը, ոսկրաբանությունը, տարբեր շարժումների ժամանակ՝ մկանների պլաստիկա:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ուսանողը ընդհանուր պատկերացում կունենա մարդու գլխի ոսկրային և մկանային համակարգի մասին: Կծանոթանա մատիտանկարի հնարավորություններին:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա վերլուծական մոտեցմամբ ուսումնասիրել գանգը, Դյուրերի երկրաչափական և անատոմիական գլուխները:</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կուսումնասիրի մարդու մարմնի վերջույթները, կծանոթանա ձեռքի, ոտքի պլաստիկային:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>  Մարդկային գանգ գիպսե գնդի և կտորի համադրությամբ: Տաշվածքով գիպսե գլուխ: Մրդու գիպսե անատոմիական գլուխ Գպսե գլուխ /Հերա, Վեներա/: Մարդու մարմնի գիպսե ձեռք, ոտք:</p>		
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b>  <i>Եզրափակիչ քննություն</i>  Եզրափակիչ քննությունը գնահատվում է 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայքայը 0,5 է:</p>		
<p><b>Հիմնական գրականության ցանկը</b>  1. Николай Лу. Рисунок; Основы учебного академического рисунка</p>		

Эксмо 2008г.  
 2. Николай Лу. Голожа челожека основы академического рисунка  
 Эксмо 2010 г.  
 3. Николай Белож основы техники рисунка Хорвест 2012г.  
 4. Джорж Б.Бриджмен: Полное руководство по рисунку.

<b>0401/ B09</b>	<b>Գունանկարչություն -2</b>	<b>5 կրեդիտ</b>
<b>6 ժամ</b>	<b>0 / 96/ 0</b>	
<b>2- րդ կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատամբ</b>	
<p>Դասընթացի նպատակն է Ուսանողներին սովորեցնել կոմպոզիցիան ճիշտ տեղադրել թղթի հարթության մեջ, զգալ նյութը, առարկաների՝ մեկը մյուսի վրա ունեցած փոխազդեցության խնդիրների վերարտադրությունը: Սովորեցնել աշխատել ջրաներկով ու գուաշով և դրանց խառնուրդներով ստանալ գունային անհրաժեշտ գամմա:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կծանոթանա մի քանի առարկաներից բաղկացած նատյուրմորտի ճիշտ կառուցման ձևերին</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կիմանա ջրաներկի և գուաշի տեխնիկայի առանձնահատկությունները,</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա ճիշտ ընտրություն կատարել գունային գամմայի անսահմանության մեջ:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>      Նկարել նատյուրմորտ՝ զիպսե երկրաչափական մարմնով, երաժըշտական գործիքով, կտորի ծալքով (Ա2, գուաշ, ջրաներկ): Նկարել նատյուրմորտ՝ կարպետով, նոներով, չոր բույսերով, կենցաղային, մետաղյա ու կավե առարկաներով (Ա2, գուաշ, ջրաներկ): Նկարել նատյուրմորտ տարբեր նյութերից պատրաստված առարկաներով, ինչպես նաև ապակյա անոթով կտորների համադրությամբ: (Ա2, գուաշ, ջրաներկ): Նկարել նատյուրմորտ մեծ ծավալ ունեցող կենցաղային իրերով (մետաղյա, փայտե, կավե), (Ա2, գուաշ, ջրաներկ):</p>		

Նկարել կարճատև նատյուրմորտ՝ սենյակային բույսերով կամ աշնանային ծաղիկներով (լուսավոր), (Ա2, գուաշ, ջրաներկ) Կատարել կոմպոզիցիոն աշխատանք, (Ա2, գուաշ, ջրաներկ)
<b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b> <i>Եզրափակիչ քննություն</i> Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայքայ 0,5 է:
<b>Հիմնական գրականության ցանկը</b> 1. Николай Лу. Рисунок; Основы учебного академического рисунка Эксмо 2008г. 2. Николай Лу. Голожа челожека основы академического рисунка Эксмо 2010 г. 3. Николай Белож основы техники рисунка Хорвест 2012г. 4. Джорж Б.Бриджмен : Полное руководство по рисунку.

<b>0103/ B16</b>	<b>Նյութերի տեխնոլոգիա-2</b>	<b>2 կրեդիտ</b>
<b>2 ժամ</b>	<b>24 / 8/ 0</b>	
<b>2-րդ կիսամյակ</b>	<b>Առանց եզրափակիչ գնահատման</b>	
Դասընթացի նպատակն է Ուսանողներին ծանոթացնել ազնիվ և գունավոր մետաղների տեսակներին և հատկություններին, հանքանյութերից նրանց ստացման տեխնոլոգիային, նրանց օգտագործման բնագավառներին, սովորեցնել ուսանողներին իրենց աշխատանքների համար ընտրել համապատասխան նյութեր:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b> <b>Գիտելիք և իմացություն</b>		
<ul style="list-style-type: none"> <li>Կիմանա ազնիվ մետաղների ստացման տեխնոլոգիան,</li> </ul>		
<b>Ունակ կլինի</b> <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b>		
<ul style="list-style-type: none"> <li>Կիմանա գունավոր մետաղների ստացման տեխնոլոգիան,</li> </ul>		
<b>/Ընդհանրական կարողություններ/</b>		
<ul style="list-style-type: none"> <li>Կկարողանա ազնիվ և գունավոր մետաղները կիրառել իր աշխատանքներում:</li> </ul>		
<b>Համառոտ բովանդակությունը:</b> Ազնիվ մետաղներ: Պալլադիումի ստացման տեխնոլոգիան: Պալլա-		

ղիումի անալիտիկ որոշումը, օգտագործման բնագավառները: Պլատինի ստացման տեխնոլոգիան, նրա կիրառությունը գեղարվեստական գործերում: Պլատինի անալիտիկ հայտնաբերումը: Ոսկու ստացման տեխնոլոգիան: Ոսկու անալիտիկ որոշումը, քանակական ստացումը՝ խառնուրդներից և համաձուլվածքներից վերականգնման եղանակով: Ոսկու կիրառության բնագավառները: Արծաթի մաքրումը հալոլթյաներից, լաբորատոր-նկարչական մնացորդներից: Արծաթի օգտագործման բնագավառները: Արծաթապատում: Գունավոր մետաղների ստացման տեխնոլոգիան: Պղնձի ստացումը հանքանյութից: Պղնձի համաձուլվածքները, լեգիրացում: Լատունի ստացումը, տեսակները և կիրառությունը: Բրոնզի ստացումը, տեսակները և օգտագործման բնագավառները: Պղինձ-նիկելային համաձուլվածքների ստացումը, նրանց տեսակները և կիրառությունը գեղարվեստական գործերում: Ալյումինի ստացումը հանքանյութերից, նրա քիմիական հատկությունները և կիրառությունը: Ցինկի ստացման տեխնոլոգիան, նրա հատկությունները, օգտագործման բնագավառները: Նիկելի ստացումն իր աղերից և խառնուրդներից: Նրա կիրառությունը գեղարվեստական գործերի պատրաստման ասպարեզում: Նիկելապատում: Անագի ստացման տեխնոլոգիան: Անագապատումը գեղարվեստական գործերում: Անագի կիրառման բնագավառները: Քրոմի ստացումը խառնուրդներից: Քրոմապատումը գեղարվեստական գործերում: Քրոմի օգտագործման բնագավառները:

**Գնահատման մեթոդները և չափանիշները:**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը՝ 9 միավոր արժեքով:

*Ստուգման ձևերն են.*

*1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:*

*2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 2,25 է:*

**Հիմնական գրականության ցանկ**

1. И. М. Коган „Химиа красители,, Москва 1956
2. К. В. Некрасов „Курс общей химии,, Москва 1959

0402 / B02	Կումպոզիցիա -2 /փայտ և կերամիկա/	4 կրեդիտ
4 ժամ	0 / 64 / 0	
2- րդ կիսամյակ	Հանրագումարային	

<p>Դասընթացի նպատակն է Ուսանողին սովորեցնել նախագծել հայկական ավանդական զարդամոտիվներով դեկորատիվ ծաղկամանի և սավոր խեցեգործության համար սավորի նախագծում</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կարողանա նախագծել կենցաղում օգտագործվող փայտե և խեցեգործական իրեր:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կարողանա ձևակազմավորել համալիր նախագծեր և կատարել դետալների մասնատում և տեխնիկական հաշվարկներ:</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կարողանա իր ստեղծագործած նախագծերը իրականացնել նյութի /փայտի, խեցու/ վրա:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>          Փորագրել դեկորատիվ առարկաներ: Սկուտեղ հայկական զարդանախշերով:</p>		
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b>          Նախատեսված է հանրագումարյին քննություն, գնահատվում է առավելագույնը 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում-քննություն:</p>		
<p><b>Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Վ. Հ. Բոդյան „Հայկական աղամաններ,,</li> <li>2. Գենադի Ֆեդոտով „Վավր և կերամիկան,, ՄՄՊԵ 2005</li> <li>3. Голубева О. Л. Основы композиции/ с иллюстрациями/. Изобразительное искусство.</li> <li>4. Сварог и К. 2008/2001 /</li> <li>5. Кринский В. Ф. Ламцов И В. Туркус М.А. Элементы архитектурно-пространственной композиции.Стройиздат. 1968</li> </ol>		

0402 / B02	Կոմպոզիցիա -2/տեքստիլ/	4 կրեդիտ
4 ժամ	0 / 64 / 0	
2- րդ կիսամյակ	Հանրագումարային	
Դասընթացի նպատակն է		

<p>Ցուցաբերել հոգատար վերաբերմունք ազգային-մշակութային ժառանգությանը և դրանց հիմքի վրա հասնել ժամանակակից խնդիրների ու պահանջների մեկնությանը և կատարմանը: Սովորեցնել պարզագույն խնդիրներից ստանալ համեմատաբար բարդ կոմպոզիցիաների գրաֆիկական և գունային լուծումներ:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա զարդանախշերի քիչ քանակությամբ ստեղծել իմաստավից և բարձրաճաշակ գործեր և ներդաշնակ միջնագարդեր և եզրագոտիներ:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա հարթության վրա ստեղծել գունագծային ռիթմիկա, գունագծային շարժում, չհավասարակշռված հավասարակշռություն,</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա քիչ միջոցներով հասնել մեծ արտահայտչականության:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>      Ստեղծել դեկորատիվ նատյուրմորտներ: Ստեղծել պարզ, դեկորատիվ զարդանոտիվներով կազմված կոմպոզիցիա-կարպետ: Կատարել կարպետի, գորգի թեմատիկ էքսիզներ երկրաչափական զարդանոտիվների օգտագործմամբ՝ պահպանելով ռապպորտի ռիթմիկ շարժման կանոնները: Կենդանիների, թռչունների և մարդկային ֆիգուրների ռճավորում և կոմպոզիցիոն պատկերի կառուցում:</p>		
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b>      Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում-քննություն:</p>		
<p><b>Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Գիվի Կանդաբելի „Գոբելեն,,</li> <li>2. Վ. Ի. Սավիցկայա „Ժամանակակից սովետական գոբելեն,,</li> <li>3. Հասմիկ Եղիազարյան „Երմնագորգ,,</li> <li>4. Վ. Գ. Ազատյան „Հայկական գորգ,,</li> </ol>		

0402 / B09	Աշխատանք նյութի վրա-2 / փայտ /	4 կրեդիտ
------------	--------------------------------	----------



<b>4 ժամ</b>	<b>0 / 64 / 0</b>	
<b>2-րդ կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատամամբ</b>	
Դասընթացի նպատակն է Ուսանողին սովորեցնել բարդ զարդանախշերով դեկորատիվ առարկաների վրա փորագրության տեխնիկական հնարավորությունները:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b> <b>Գիտելիք և իմացություն</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• Կիմանա փորագրել դեկորատիվ առարկաներ:</li> </ul>		
<b>Ունակ կլինի</b> <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա փորագրել բարդ զարդանախշեր:</li> </ul>		
<b>/Ընդհանրական կարողություններ/</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա փորագրել բարդ զարդանախշերով դեկորատիվ զարդանախշեր:</li> </ul>		
<b>Համառոտ բովանդակությունը</b> Փորագրել բարդ զարդանախշերով խոհանոցային պարագաներ /գդալ, շերեփ և այլն /:		
<b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b> Եզրափակիչ քննությունը գնահատվում է 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:		
<b>Հիմնական գրականության ցանկ</b>		

<b>0402 / B09</b>	<b>Աշխատանք նյութի վրա-2 /կերամիկա/</b>	<b>4 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>0 / 64 / 0</b>	
<b>2-րդ կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատամամբ</b>	
Դասընթացի նպատակն է Ուսանողին սովորեցնել կոնկրետ առարկա պատրաստելու համար ճիշտ ընտրել նյութը:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b> <b>Գիտելիք և իմացություն</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• Կիմանա կավանյութի հետ աշխատելու մեթոդներին և տեխնիկական միջոցներին:</li> </ul>		
<b>Ունակ կլինի</b>		

<p><b>/Բուն մասնագիտական կարողություններ/ /Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կտիրապետի պլաստիկ մասսայի պատրաստմանը իրերի վրա խազային նախշագարդմանը:</li> </ul>
<p><b>Համառոտ բովանդակությունը</b> Սկուտեղ հայկական զարդանախշերով:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b> Եզրափակիչ քննությունը գնահատվում է 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայքայը 0,5 է:</p>
<p><b>Հիմնական գրականության ցանկը</b> 1. Վ. Հ. Բոդյան „Հայկական աղամաններ,, 2. Գենադի Ֆեդոտով „Կավը և կերամիկան,, ՄՄՊԵ 2005</p>

<b>0402 / B09</b>	<b>Աշխատանք նյութի վրա-2 /տեքստիլ/</b>	<b>4 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>0 / 64 / 0</b>	
<b>2- րդ կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատմամբ</b>	
<p>Դասընթացի նպատակն է Ուսանողին սովորեցնել հայկական տառատեսակների ոճավորում և ասեղնագործում կարպետի տեխնիկայով:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b> <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կիմանա հայկական տառատեսակների և ասեղնագործության մասին: Կտիրապետի հաշվարկային սխեմային, կկատարի մեկ տառատեսակ:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b> <b>/Բուն մասնագիտական կարողություններ/ • Կկարողանա ավարտուն ներկայացնել առաջադրանքը բոլոր հնարքների ստեղծագործաբար կիրառմամբ: /Ընդհանրական կարողություններ/ • Կտիրապետի տառագարդի գործածման երկրաչափական և բուսական ոճավորմանը,և թռչնագարդով տարբերակին:</b></p>		
<p><b>Համառոտ բովանդակությունը</b> Կարպետի տեխնիկայով գործել ոճավորված տառատեսակ: Գործել ասեղնագործ անձեռոցիկ:</p>		
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b></p>		

Եզրափակիչ քննությունը գնահատվում է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայքայ 0,5 է:
<b>Հիմնական գրականության ցանկ</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Սերիկ Դավթյան „Հայկական կարպետ,, „Հայկական ասեղնագործություն,,</li> <li>2. Է.Ա. Թանգյան „Զարդանկար այբուբեն,,</li> <li>3. Հենրիկ Մնացականյան „Հայկական տառատեսակներ,,</li> </ol>

<b>0401/ B03</b>	<b>Գծանկարչություն-3</b>	<b>5 կրեդիտ</b>
<b>6 ժամ</b>	<b>0/96/ 0</b>	
<b>3- րդ կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատմամբ</b>	
<p>Դասընթացի նպատակն է Ուսանողը պետք է մանրակրկիտ ուսումնասիրի մարդու գլխի կառուցվածքը, համամասնությունները: Անհրաժեշտ է զարգացնել տարածական ընկալում, տարբերակել լուսաստվերի առանձնահատկությունները՝ ընկնող և սեփական ստվերներ, փայլ, արտացոլում և այլն: Պետք է ուսումնասիրի մարդու իրանի կառուցվածքը, նկարի գիպսե տորս՝ ըմբռնելու համար մարդու իրանի համաչափությունները:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կուսումնասիրի լուսաստվերի առանձնահատկությունները:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ձեռք կբերի գծի, տոնի արագ ընկալման ունակություն</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կզարգացնի տարածական մտածելակերպ</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>  Գիպսե գլուխ շարժումով /ստրուկի գլուխ, Հերմես/: Գիպսե գլուխ /անահիտ, Վեներա/: Գիպսե դիմակ /Արիստոտել, Լաուկսոն/:  Գիպսե տորս: Գիպսե իրան:</p>		
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b>  <i>Եզրափակիչ քննություն</i>  Եզրափակիչ քննությունը գնահատվում է 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայքայ 0,5 է:</p>		
<b>Հիմնական գրականության ցանկ</b>		

1. Николай Лу. Рисунок; Основы учебного академического рисунка Эксмо 2008г.
2. Николай Лу. Голожа челожека основы академического рисунка Эксмо 2010 г.
3. Николай Белож основы техники рисунка Хорвест 2012г.
4. Джорж Б.Бриджмен : Полное руководство по рисунку.

<b>0401/ B10</b>	<b>Գունանկարչություն -3</b>	<b>5 կրեդիտ</b>
<b>6 ժամ</b>	<b>0 / 96/ 0</b>	
<b>3- րդ կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատմամբ</b>	
<p>Դասընթացի նպատակն է Առարկայի նպատակն է կատարելագործել գուաշով աշխատելու տեխնիկան՝ անհրաժեշտ համադիր, հակադիր գունային կոլորիտներ ստանալու համար: Ուսանողների մոտ ձևավորել ուրույն և կազմակերպված վերաբերմունք բնության երևույթների վերաբերյալ, կոմպոզիցիայի ծավալային և տարածական խնդիրների հանդեպ վերլուծական մոտեցում:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա հասնել վրձնահարվածների վարպետության:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կհասկանա գունային համադրությունների համատեղելիության խնդիրները:</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա ստեղծել սեփական ոճ:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>  Նկարել նատյուրմորտ՝ մրգերով, սկուտեղով, սափորով, դդումով, սեխով կամ ձմերուկով (լուսավոր, նարնջագույն, դեղին ֆոնի վրա), (Ս2, գուաշ, ջրաներկ): Նկարել նատյուրմորտ՝ սենյակային բույսերով, մրգերով, սպիտակ կտորի ծայքերով (Ս2, գուաշ, ջրաներկ): Նկարել կարճատև նատյուրմորտ՝ ծաղկեփնջով (Ս2, գուաշ, ջրաներկ): Նկարել նատյուրմորտ՝ գիպսե զարդանախշով, մուգ կտորի ծայքերով, նարնջով, լիմոնով, սափորով, սկուտեղով կամ ափսեով, փայտե գդալով (Ս2, գուաշ, ջրաներկ): Նկարել նատյուրմորտ՝ մեղմ</p>		

գունային երանգներով (միջավայրը՝ փակ), (Ա2, գուաշ, ջրաներկ): Կատարել կոմպոզիցիոն աշխատանք(Ա2, գուաշ, ջրաներկ, պաստել):
<b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b> <i>Եզրափակիչ քննություն</i> Եզրափակիչ քննությունը գնահատվում է 10 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայքայ 0,5 է:
<b>Հիմնական գրականության ցանկը</b> 1. Николай Лу. Рисунок; Основы учебного академического рисунка Эксмо 2008г. 2. Николай Лу. Голожа челожека основы академического рисунка Эксмо 2010 г. 3. Николай Белож основы техники рисунка Хорвест 2012г. 4. Джорж Б.Бриджмен : Полное руководство по рисунку.

<b>0401/ B15</b>	<b>Քանդակագործություն-1</b>	<b>4 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>0/64/ 0</b>	
<b>3- րդ կիսամյակ</b>	<b>Հանրագումարային</b>	
Դասընթացի նպատակն է Ուսանողներին սովորեցնել ստեղծել ծավալների շոշափելի և իրականակերպ դրսևորումներ, որոնք հնարավորություն կտան դիտողին ծավալներն ընկալել տարբեր դիտակետերից:Ընկալել մարդու գլխի և վերջույթների կառուցվածքը: Տիրապետել կավի ծեփվածքի հետ աշխատելու նրբություններին:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b> <b>Գիտելիք և իմացություն</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• Ուսանողը կըմբռնի մարդու գլխի մանրամասների առանձին-առանձին և ամբողջական կառուցվածքը: Կծանոթանա մարդու /կենդանիների/ մարմնի կառուցվածքային վերջույթների հետ: Կյուրացնի մարդու ձեռքերի, ոտքերի պլաստիկան:</li> </ul>		
<b>Ունակ կլինի</b> <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• Կատարել կարճատև ճեպանկարներ՝ հաշվի առնելով առարկայի առանձնահատկությունները: Նկարել մարդու դեմքի մանրամասներ տարբեր կրճատումների մեջ /աչք, քիթ, բերան, ականջ/: Ուսումնասիրել դեմքի մկանները՝ տարբեր զգացողությունների մեջ</li> </ul>		

<p>/գարմանք,ցասում,ուրախություն/:</p> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Գլխի առանձին մանրամասների ամբողջացում: Մարդու մարմնի վերջույթներին փոխկապակցված շարժում հաղորդել: Ծավալների պլաստիկ խնդիրների լուծումներ:</li> </ul>
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b></p> <p>Դեմքի մասերի յուրահատկությունների ուսումնասիրում,ընդօրինակում: Ոտքերի ձեռքերի պատճենաքանդակում: Ստեղծագործական աշխատանքներ,խորաքանդակ: Գնահատման մեթոդները և չափանիշները:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b></p> <p>Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում-քննություն:</p>
<p><b>Հիմնական գրականության ցանկը</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Ենյո Բարչայ „Անատոմիա նկարիչների համար,,</li> <li>Է. Լանթերի „Շեփվածք,, ԽՍՀՄ գեղ. ակադեմիայի հրատ. Մոսկվա 1963թ.</li> </ol>

<b>0402 / B03</b>	<b>Կոմպոզիցիա -3/փայտ և կերամիկա/</b>	<b>5 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>0 / 64 / 0</b>	
<b>3- րդ կիսամյակ</b>	<b>Հանրագումարային</b>	
<p>Դասընթացի նպատակն է Ուսանողին սովորեցնել նախագծել բուսական ոճավորումներով, դեկորատիվ մրգաման: Ուսուցանել մրգամանի պրոյեկցիաները և արհմոմենտիան կառուցելու մեթոդները:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b></p> <p><b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կկարողանա նախագծել՝ պահպանելով առարկայի կառուցվածքային համաչափությունները:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b></p> <p><b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կկարողանա գեղարվեստորեն նախագծել ծաղկաման, ինչպես նաև ձևավորել նրա համալրված նախագիծը:</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p>		

<ul style="list-style-type: none"> <li>• Կվարդանա փայտից ու խեցուց պատրաստել բարձր ճաշակի ղեկորատիվ ծաղկաման:</li> </ul>
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b></p> <p>Նախագծել բուսական ոճավորումով ղեկորատիվ մրգաման: Գծել երկու պրոյեկցիաները և արքիտոնմետրիան: Նախագծել գեղարվեստական ծաղկաման: Գծել երկու պրոյեկցիաները և արքիտոնմետրիան:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b></p> <p>Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում-քննություն:</p>
<p><b>Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Վ. Հ. Բդոյան „Հայկական աղամաններ,,</li> <li>2. Գենադի Ֆեդոտով „Վավը և կերամիկան,, ՄՄՊԵ 2005</li> <li>3. Голубева О. Л. Основы композиции/ с иллюстрациями/. Изобразительное искусство.</li> <li>4. Сварог и К. 2008/2001 /</li> <li>5. Кринский В. Ф. Ламцов И В. Туркус М.А. Элементы архитектурно-пространственной композиции.Стройиздат. 1968</li> </ol>

<b>0402 / B03</b>	<b>Կոմպոզիցիա -3 / տեքստիլ /</b>	<b>5 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>0 / 64 / 0</b>	
<b>3- րդ կիսամյակ</b>	<b>Հանրագումարային</b>	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել հասկանալ ու գիտակցելու գորգադաշտը երիզող գոտիների, նրանցում կիրառվող զարդամոտիվների նշանակությունը՝ գորգի գոտիներ ստեղծելու համար: Սովորեցնել ոչ համաչափ և համաչափ կոմպոզիցիաներում, հայտնի խորհրդանշական զարդամոտիվներ կիրառելով, բացահայտել մտահղացման ասոցիատիվ տպավորություն</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b></p> <p><b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կիմանա գորգադաշտը երիզող գոտիների նշանակությունը, նրանցում օգտագործված զարդամոտիվների կիրառությունը:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b></p> <p><b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կվարդանա ստեղծել գունային ռիթմիկայով տրամադրություն,</li> </ul>		

<p>զգացողություն՝ պահպանելով կոմպոզիցիայի կառուցման բոլոր հնարքները,  <b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա ուսումնասիրել կիրառական արվեստում գոյություն ունեցող նմուշները:</li> </ul>
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>          Ստեղծել երկրաչափական, բուսական և կենդանական էլեմենտներով գորգի գոտիներ՝ օգտագործելով գորգարվեստից մեզ հասած եզրագոտիների զարդամոտիվները: Ստեղծել խորհրդանշական էլեմենտներով կոմպոզիցիաներ (կարպետ, գոբելեն): Ստեղծել կոմպոզիցիաներ սփռոցների, ծածկոցների, բարձիկների, սրբիչների համար՝ օգտագործելով ազգային ժառանգության նմուշներ:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b>          Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում-քննություն:</p>
<p><b>Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Գիվի Կանդարելի „Գոբելեն,,</li> <li>2. Վ. Ի. Սավիցկայա „Ժամանակակից սովետական գոբելեն,,</li> <li>3. Հասմիկ Եղիազարյան „Երմնագորգ,,</li> <li>4. Վ. Գ. Ազատյան „ Հայկական գորգ ,,</li> </ol>

<b>0402 / B10</b>	<b>Աշխատանք կյուֆի վրա-3 / փայտ /</b>	<b>5 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>0 / 64 / 0</b>	
<b>3- րդ կիսամյակ</b>	<b>Հանրագումարային</b>	
Դասընթացի նպատակն է Ուսանողին սովորեցնել բարդ զարդանախշերով դեկորատիվ առարկաների վրա փորագրելու տեխնիկական հնարքները:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>		
<b>Գիտելիք և իմացություն</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• Կիմանա բուսական զարդանախշերով փորագրության տեխնիկան:</li> </ul>		
<b>Ունակ կլինի</b>		
<b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա փորագրել բուսական զարդանախշեր գնդային, կո-</li> </ul>		



<p>նական և պտտական մակերևույթի վրա:  <b>/Ընդհանրական կարողություններ/</b>  <ul style="list-style-type: none"> <li>Կկարողանա փորագրել բարդ զարդանախշեր:</li> </ul> </p>
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>          Փորագրել բուսական զարդանախշերով դեկորատիվ մոմակալ:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b>          Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում-քննություն:</p>
<p><b>Հիմնական գրականության ցանկը</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Голубева О. Л. Основы композиции/ с иллюстрациями/. Изобразительное искусство.</li> <li>2. Сварог и К. 2008/2001 /</li> <li>3. Кринский В. Ф. Ламцов И В. Туркус М.А. Элементы архитектурно-пространственной композиции. Стройиздат. 1968</li> </ol>

<b>0402 / B10</b>	<b>Աշխատանք նյութի վրա-3 /կերամիկա/</b>	<b>5 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>0 / 64 / 0</b>	
<b>3- րդ կիսամյակ</b>	<b>Հանրագումարային</b>	
<p>Դասընթացի նպատակն է Ուսումնական մոդուլի նպատակն է ազատ ստեղծագործական աշխատանքների կատարում:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կիմանա անվտանգության կանոնների պահպանումը, կերամիկական վառարանների և հաստոցների օգտագործումը և պահպանումը:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Զուգակցել ժողովրդական կիրառական արվեստի ավանդույթները նոր ձևով:</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա ազատ ստեղծագործել և վերջնական ավարտին հասցնել իրը:</li> </ul>		

<b>Համառոտ բովանդակությունը:</b> Դեկորատիվ ծաղկաման շերտերով բարձրանալու եղանակով:
<b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b> Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում-քննություն:
<b>Հիմնական գրականության ցանկ</b> 1. Վ. Հ. Բոյոյան, «Հայկական աղամաններ», 2. Գենադի Ֆեդոտով, «Կավը և կերամիկան», ՄՄՊԵ 2005

<b>0402 / B10</b>	<b>Աշխատանք նյութի վրա-3 /տեքստիլ/</b>	<b>5 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>0 / 64 / 0</b>	
<b>3- րդ կիսամյակ</b>	<b>Հանրագումարային</b>	
Դասընթացի նպատակն է Ուսումնական մոդուլի նպատակն է ուսանողին սովորեցնել հայկական կարպետի տեխնիկայի առանձնահատկությունները:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b> <b>Գիտելիք և իմացություն</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• Կլարողանա տեխնիկական հաշվարկից օգտվելով՝ գործել կարպետ՝ օգտագործելով մի քանի ֆոներ և եզրագոտիներ:</li> </ul>		
<b>Ունակ կլինի</b>		
<b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• Ավարտուն կարպետի մեջ համադրել եզրագոտու, միջնագարդի և անկյունագարդերի կոլորիտը թելի թեք օղաճիտի, բուկլեի, լյուրեկսի համադրմամբ:</li> </ul>		
<b>/Ընդհանրական կարողություններ/</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• Կունենա ավարտուն աշխատանք:</li> </ul>		
<b>Համառոտ բովանդակությունը:</b> Հենքի նախապատրաստում: Գործել կարպետ:		
<b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b> Նախատեսված է հանրագումարային քննություն, գնահատվում է առավելագույնը՝ 20 միավոր արժեքով: Ստուգման ձևը՝ դիտում-քննություն:		
<b>Հիմնական գրականության ցանկ</b> 1. Վ. Գ. Ազատյան, «Հայկական գորգեր»,		

2. Առաքել Պատրիկ „Հայկական տարագ,,
3. Լուսիկ Ագուլեցի „Անցյալի մասունքներ,,

<b>0103/ B17</b>	<b>Նյութերի տեխնոլոգիա-3</b>	<b>2 կրեդիտ</b>
<b>2 ժամ</b>	<b>24 / 8/ 0</b>	
<b>3- րդ կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատմամբ</b>	
<p>Դասընթացի նպատակն է Ուսանողին ծանոթացնել բնական և արհեստական թելերի տեսակներին և հատկություններին, դրանց ստացման եղանակներին, օգտագործման բնագավառներին, սովորեցնել ուսանողներին իրենց աշխատանքների համար ընտրել համապատասխան նյութեր:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կծանոթանա բնական և արհեստական թելերի տեսակներին:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կծանոթանա սինթետիկ թելերի ստացման գործընթացին</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա իր աշխատանքների համար ընտրել համապատասխան որակի թելեր:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>  Թելերի ստացման տեխնոլոգիան: Բնական թելեր, նրանց տեսակները և ստացման եղանակները: Արհեստական թելեր, ստացման եղանակները և կիրառությունը: Մինթետիկ թելեր, նրանց տեսակները և ստացման եղանակները: Պոլիամիդային թելեր, նրանց տեսակները, ստացման եղանակները և կիրառությունը: Պոլիհեքսամեթիլեն ադիպամիդային թելեր, նրանց ստացումը և կիրառությունը: Պոլի-էնանտոամիդային թելեր: Պոլի-Տ-կապրոնաամիդային թելեր: Պոլի-ունդեկանամիդային թելեր, նրանց ստացումը և կիրառությունը: Պոլիվինիլապիրտային թելեր, նրանց ստացումը և կիրառությունը: Պոլիվինիլքլորիդային թելեր, նրանց ստացումը և կիրառությունը: Պոլիպրոպիլենային թելեր, նրանց ստացումը և կիրառությունը: Պոլիակրիլային թելեր, նրանց ստացումը և կիրառությունը:</p>		
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները:</b>  Եզրափակիչ քննությունը գրավոր է 10 միավոր առավելագույն արժե-</p>		

քով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

**Հիմնական գրականության ցանկ**

<b>0202/ B25</b>	<b>Հնագույն և հին շրջանի արտ. արվեստի պատմություն</b>	<b>3 կրեդիտ</b>
<b>4 ժամ</b>	<b>48 / 0/ 16</b>	
<b>4- րդ կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատմամբ</b>	
<p><b>Դասընթացի նպատակն է</b>          Ուսանողներին ծանոթացնել նախնադարյան արվեստին, Հին Եգիպտոսի, Միջագետքի, Իրանի, Հին Հռոմի և Հունաստանի մշակույթների պատմության, կրոնա-դիցաբանության, արվեստի առաջացման, զարգացման օրինաչափությունների հետ: Իլյուստրատիվ նյութի և տեսաֆիլմերի հիման վրա ներկայացնել հին քաղաքակրթությունների ճարտարապետությունը, քանդակագործությունը և գեղանկարչությունը: Ձևավորել հուշարձանների գիտական վերլուծությունների մասին պատկերացում:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կիմանա արվեստի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>/Բուն մասնագիտական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կճանաչի հին աշխարհի արվեստի կարևոր հուշարձանները:</li> </ul> <p><b>/Ընդհանրական կարողություններ/</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա ծանոթանալ համաշխարհային հռչակ վայելող արվեստի ստեղծագործություններին:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը:</b>          Ներածություն: Նախնադարյան արվեստ: Հին Եգիպտոսի արվեստը: Միջագետքի արվեստը: Աքեմենյան Իրանի արվեստը: Էգեյան արվեստը: Հին Հունաստանի արվեստը. ա/ Հոմերոսյան շրջան; բ/ Արխաիկ շրջան; գ/ Դասական շրջան; դ/ Հելլենիզմ: Հին Հռոմի արվեստը. ա/ Հանրապետական շրջան; բ/ Կայսերական շրջան; գ/ Ուշ հռոմեական շրջան:</p>		

**Գնահատման մեթոդները և չափանիշները:**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններն անցկացվում են թեստերով, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 8 հարց, յուրաքանչյուրը՝ 0,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,3,2,2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

**Հիմնական գրականության ցանկ**

1. Արտասահմանյան արվեստի պատմություն
2. Памятники мирового искусства, т. 1, 2, 3 Москва 1971

<b>0401/ B04</b>	<b>Գծանկարչություն-4</b>	<b>4 կրեդիտ</b>
<b>6 ժամ</b>	<b>0/96/ 0</b>	
<b>4- րդ կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատմամբ</b>	
<p>Դասընթացի նպատակն է Հատուկ ուշադրություն դարձնել տարբեր դիրքերում գտնվող մարդու մարմնին՝ առանձնակիորեն շեշտադրելով գլխի և իրանի, ձեռքերի և ոտքերի ներդաշնակ փոխհամաձայնեցվածությանը ընդհանուր շարժման մեջ: Դասական օրինակների տեխնիկական հնարքների հետևողական ուսումնասիրություն:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b> <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"><li>• Կկարողանա քննարկել կառուցման, տեղադրման հարցերը:</li></ul>		
